ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀ, ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԱՇՈՏ ՍԱՂՅԱՆՆ ԸՆՏՐՎԵԼ Է ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԱՆԴԱՄ

Սույն թվականի հունիսի 1-ին Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի (ՌԳԱ) ընդհանուր ժողովում ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սաղյանն ընտրվեց Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի արտասահմանյան անդամ կենսաօրգանական քիմիա մասնագիտության գծով:

Աշոտ Սաղյանն ակտիվ համագործակցում է Ռուսաստանի գիտնականների հետ: Նա ՌԳԱ Նեմեյանովի անվան էլեմենտօրգանական միացությունների ինստիտուտի գիտաշխատողների հետ համատեղ ունի ավելի քան 50 գիտական հոդված, մասնակցել է 7 համատեղ միջազգային գիտական դրամաշնորհային ծրագրերի, համատեղ պատրաստել են մի շարք գիտական կադրեր:

Աշոտ Սաղյանի գիտական գործունեության բնագավառն է ոչ սպիտակուցային ամինաթթուների ասիմետրիկ բիոմիմետիկ սինթեզը, մանրէաբանական սինթեզի կուլտուրալ հեղուկներից ամինաթթուների անջատումը և մաքրումը: Աշոտ Սաղյանը շուրջ 350 գիտական հոդվածի, 2 դասագրքի, 2 մենագրության հեղինակ է: Նա 18 թեկնածուական և 3 դոկտորական ատենախոսությունների գիտական ղեկավար է:

2001 թ. Աշոտ Սաղյանը ռուս գործընկերների հետ համատեղ արժանացել է Եվրամիության «Դեկարտի» անվան մրցանակի: 2002 թ. պարգևատրվել է Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարական «Բարեկամություն» շքանշանով: 2004 և 2011 թթ. արժանացել է ՀՀ նախագահի մրցանակների, 2009 թ.՝ ՀՀ վարչապետի հուշամեդալի: 2014 թ. ստացել է գիտության վաստակավոր գործչի կոչում: 2015 թ. արժանացել է ՀՀ պետական մրցանակի:

Ներկայում ՀՀ ԳԱԱ-ն և ՌԳԱ-ն ակտիվ համագործակցում են տարբեր գիտական ծրագրերի շրջանակներում: Հայ և ռուս գիտնականների պատվիրակությունները կատարել են փոխադարձ այցեր գիտահետազոտական կազմակերպություններ, ծանոթացել են առաջատար գիտնականների հետ, իրականացվող գիտական ծրագրերին՝ գիտատեխնիկական բազայի հետ համատեղ հետազոտություններ իրականացնելու համար:

2021 թ. նոյեմբերի 5-ին ՌԳԱ-ի նախագահ, ակադեմիկոս Ալեքսանդր Սերգեևը և ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սաղյանը ստորագրել են Գիտատեխնիկական համագործակցության համաձայնագրի դրույթների իրականացման ճանապարհային քարտեզ: Այն նախատեսում է համատեղ հետազոտությունների շարունակություն և համագործակցություն Հայաստանի և

Ռուսաստանի համար արդիական և առաջնահերթ ուղղություններով՝ ներառյալ ֆիզիկայի, մաթեմատիկայի, ինֆորմատիկայի, նանոտեխնոլոգիաների, կենսաբանական գիտությունների և կենսատեխնոլոգիայի, քիմիայի և նյութերի մասին գիտության, պատմաբանասիրական, բժշկական, գյուղատնտեսական հետազոտությունների, էներգետիկայի, մեխանիկայի ոլորտները, ընդհանուր՝ 54 համատեղ հետազոտություններ:

«ԳԻՏՈՒԹՅՈՒՆ», ՀՈՒՆԻՍ, № 6, 2022 Թ.